Իրանի դեմ ռազմական հակամարտության 5 կետերի շուրջ

Փորձագետի մեկնաբանություն, 14.05.2026 թ.[1]

Արեստակես Ս. Սիմավորյան[2]

ԻԻՀ նկատմամբ սանձազերծված պատերազմը պարզապես Իրան–Իսրայել կամ Իրան–ԱՄՆ հերթական ռազմական բախում չէ, ինչպես ենթադրում են բազմաթիվ փորձագետներ: Իրականում տեղի է ունենում բազմատարր և բազմաբևեռ պատերազմ Թեհրանի դեմ, որը միաժամանակ տարածաշրջանային համակարգի, գաղափարախոսության և աշխարհաքաղաքական հանգույցի մաս է կազմում: Այս համատեքստում Վաշինգտոնի և Թել Ավիվի նպատակները, կարծես, ամբողջությամբ նույնական չեն. որոշ դեպքերում դրանք համընկնում են, սակայն ունեն տարբեր ռազմավարական խորություններ և հեռանկարներ: Իսրայելի առաջնային նպատակը **սեփական անվտանգության երկարաժամկետ երաշխավորումն ու տարածաշրջանում գերիշխանության հաստատումն է**, մինչդեռ ԱՄՆ-ի համար **ԻԻՀ-ն այս պատերազմում դիտվում է որպես համաշխարհային ուժային վերաձևավորման նախագծի կարևոր հանգույց**:

Այս ռազմական հակամարտության ամենատեսանելի՝ **առաջին կետը** վերաբերում է նախևառաջ անվտանգության և հեգեմոնիայի հարցերին: Ինչպես հայտնի է, Իսրայելը տասնամյակներ շարունակ համարել է, որ իր երկիրը «մշտական սպառնալիքի ներքո գտնվող պետություն է», որի անվտանգությունը երկար ժամանակ կախված է եղել արտաքին հովանավորությունից: Այժմ, սակայն, ինչպես տեսնում ենք, որոշ արտաքին ուժեր, և առաջին հերթին ԱՄՆ-ը, ձգտում են Իսրայելին դարձնել ողջ Մերձավոր Արևելքի անվտանգության ճարտարապետության առանցքային դերակատար: Այդ տրամաբանության մեջ են տեղավորվում թե՛ Իսրայելի որակական ռազմական գերազանցությունը, թե՛ տարածաշրջանային հակաօդային պաշտպանության միասնական համակարգի՝ MEAD-ի կառուցման գաղափարը, ինչպես նաև Աբրահամյան համաձայնագրերի ընդլայնումն ու Պարսից ծոցի անվտանգության նոր համակարգի ձևավորումը[3]:

Այս հակամարտության ամենախորքային՝ **երկրորդ նպատակը** ուղղված է Իրանի ներքայքայման փորձերին: Եթե ուշադիր հետևենք արևմտյան մամուլի հրապարակումներին

---

[1] Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2026 թ. մայիսի 10-ին:

[2] Արևելագետ, թուրքագետ: 2008–2019 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում որպես Հայագիտական կենտրոնի ղեկավար, 2014–2021 թթ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն»-ի գիտաշխատող: 2019–2021 թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վերլուծական ծառայության» բաժնում որպես ավագ փորձագետ: 2021–2022 թթ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի «Գիտահետազոտական աշխատանքների և միջազգային կապերի բաժնի» գլխավոր արխիվագետ: 100-ից ավելի գիտավերլուծական հոդվածների և 12 կոլեկտիվ մենագրության հեղինակ է:

[3] COL. (RES) Ryan Gity. Israel secures status as 'security brain of the Middle East' amid new defense alliances – opinion. *The Jerusalem Post.* https://www.jpost.com/defense-and-tech/article-873440

և պաշտոնական հռետորաբանությանը, ապա նախապատերազմյան շրջանում անընդհատ շեշտադրվում էր ամեն գնով կասեցնել կամ իսպառ վերացնել Իրանի «միջուկային ծրագիրը»: Տեղեկատվական մանիպուլյացիան կայանում էր նրանում, որ գրեթե երբեք չէր ընդգծվում «խաղաղ միջուկային ծրագիրը», և գլոբալ հանրության մոտ ստեղծվում էր տպավորություն, թե խոսքը վերաբերում է «ռազմական միջուկային ծրագրի» ոչնչացմանը: Խորքային առումով ԱՄՆ–Իսրայել երկյակը թիրախավորել էր Իրանին՝ նպատակ ունենալով կազմալուծել նրա «*իսլամական հեղափոխական ինքնությունը*» և «*Դիմադրության առանցքի*» գաղափարախոսական հիմքերը: Հետևաբար, այդ հիմքերը խարխլելու համար հարվածի տակ հայտնվեցին ոչ միայն ռազմական-ռազմավարական օբյեկտները, այլև քաղաքական ու կրոնական վերնախավերը, ինչպես նաև իշխանության միջուկը կազմող Հեղափոխության պահապանների կորպուսը, նրա կազմում գործող հետախուզական «Ղոդսի» ուժերը, «Բասիջ» կամավորական աշխարհազորային ջոկատները և Իրանի ազդեցության ցանցերը՝ «Հեզբոլլահից» մինչև շիա զինված խմբավորումներ Իրաքում ու Եմենում: Փաստացի, Իրանը բոլոր կողմերից ենթարկվում է համակարգային ճնշման:

Սակայն սա կարելի է համարել պատերազմի ամենաանորոշ կողմերից մեկը: ԱՄՆ–Իսրայել տանդեմը ռազմական գործողություններով նպատակ ուներ ոչ միայն Իրանի ռազմաքաղաքական վերնախավի «գլխատման», այլև իրանական հանրությանը սեփական իշխանությունների դեմ դուրս բերելու: Հակառակորդ ուժերը, հավանաբար, կարծում էին, որ Իրանում 2025 թ. դեկտեմբերի վերջին և մինչև 2026 թ. հունվարի կեսերին շարունակվող զանգվածային բողոքի ցույցերը հարձակումների ֆոնին կարող էին վերստին բռնկվել: Սակայն, ինչպես ցույց տվեց փորձը, արտաքին ճնշումը միշտ չէ, որ սպասված արդյունք է տալիս. առնվազն այս պահին նման զարգացումների նշույլ անգամ չի նկատվում: Զարմանալի է, որ այդ ուժերը հաշվի չէին առել այն հանգամանքը, որ 1979 թվականից ի վեր Իրանի քաղաքական մշակույթում «պաշարված ամրոցի» հոգեբանությունը խոր արմատներ է գցել: Արդյունքում ռազմական ճնշումը ոչ թե արագացրեց վարչակարգի փլուզումը, այլև ուժեղացրեց դրա դիմադրողականությունը: Ավելին՝ այն հակառակ ազդեցություն ունեցավ՝ բախվելով հանրային համախմբման և գոյաբանական դիմադրության պատին: Այս համատեքստում հեղինակիս համար գլխավոր անպատասխան հարցն այն է, թե արդյո՞ք Իրանը ներկայիս քաղաքական կառուցվածքով շարունակում է մնալ անձեռնմխելի համակարգ, թե արդեն մտել է այնպիսի ներքին ճաքերի փուլ, որը մեզ համար դեռևս անտեսանելի է:

Հաջորդ՝ հակամարտության **երրորդ կետը** վերաբերում է տարածաշրջանի նոր ճարտարապետության ձևավորման փորձերին: Նկատելի է, որ Մերձավոր Արևելքում կառուցվում է ուժերի հավասարակշռության այնպիսի համակարգ, որտեղ արաբական միապետությունները աստիճանաբար ինտեգրվում են Իսրայելի անվտանգության տրամաբանության մեջ: Այդ համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի

Թուրքիայի գործոնը. նրա քաղաքական վերնախավը համոզված է, որ Անկարան տարածաշրջանի միակ խոշոր խաղացողն է, որը, լինելով ՆԱՏՕ-ի անդամ, միաժամանակ վարում է հավասարակշռված քաղաքականություն Ռուսաստանի հետ, սահմանակցում է Իրանին, ունի տնտեսական խորը հարաբերություններ Պարսից ծոցի երկրների հետ և ներգրավված է չինական տնտեսական նախագծերում: Ներկայիս պատերազմը փորձ է նաև հասկանալու՝ արդյո՞ք Թուրքիան կկարողանա պահպանել իր «ռազմավարական ինքնավարությունը»: Իրականում, ինչպես եզրակացնում են բազմաթիվ փորձագետներ, Անկարան կանգնած է չափազանց բարդ ընտրության առջև. քաղաքական իմաստով Իրանի հետ չափազանց մերձենալը կհանգեցնի արևմտյան և արաբական ճնշումների աճին, իսկ «իսրայելակենտրոն» անվտանգության համակարգին ինտեգրվելը կվտանգի նրա՝ ինքնուրույն բևեռ լինելու հավակնությունները:

Մյուս կարևոր՝ հակամարտության **չորրորդ կետը**, ծովային և էներգետիկ վերահսկողության հարցն է: Գաղտնիք չէ, որ Հորմուզի նեղուցը և Կարմիր ծովի երթուղիները համաշխարհային էներգետիկ համակարգի հիմնական զարկերակներն են: Այդ պատճառով Իրանի դեմ կիրառվող ճնշումները անդրադառնում են նաև ՉԺՀ-ի էներգետիկ անվտանգության վրա. Իրանը ոչ միայն վառելիքա-էներգետիկ հումքի աղբյուր է, այլև «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի կարևոր հանգույցներից: Հետևաբար, Թեհրանի շուրջ ցանկացած անկայուն միջավայրի ստեղծումը ակամայից վերածվում է Պեկինի նկատմամբ ռազմավարական ճնշման մեխանիզմի:

Այսպիսով, Իրանի շուրջ հակամարտությունը դուրս է գալիս Մերձավոր Արևելքի սահմաններից՝ վերածվելով համաշխարհային մրցակցության բաղադրիչի: Բացի այդ, այս գործողությունները պետք է դիտարկվեն որպես ազդակ Պեկինի և Մոսկվայի համար, քանի որ ԱՄՆ-ը ձգտում է վերահաստատել իր ուժի գլոբալ պրոյեկցիան՝ ցույց տալով, որ դեռևս ունակ է վերահսկելու հիմնական աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական միջանցքները: Վերջինիս պարագայում՝ հաշվի առնելով էներգակիրների գների կտրուկ տատանումները, ԱՄՆ պայքարի թիրախում են հայտնվել *India-Middle East-Europe Economic Corridor (IMEC)* և *International North-South Transport Corridor (INSTC)* նախագծերը: Կարճ ասած, Ասիան, ինչպես նաև ընդհանրապես Եվրասիական ու Միջերկրածովյան տարածաշրջանները, մեծ տերությունների ապագա գլոբալ մրցակցության առանցքում են, որի հետևանքով հնարավոր է ձևավորվեն միմյանց քաղաքականությանը հակադրվող իրատեսական բևեռներ՝ ռազմաքաղաքական դաշինքների տեսքով:

Վերջապես, անդրադառնալով Իրանի շուրջ ծավալվող հակամարտության վերջին՝ **հինգերորդ կետին**, ինչպես նշվել էր նախորդ հոդվածում, այն պայմանավորված է նաև

ներքաղաքական շարժառիթներով[4]: Դա վերաբերում է թե՛ Իսրայելին, թե՛ ԱՄՆ-ին: Միջազգային փորձագիտական հանրությունը ևս կարծում է, որ պատերազմը կապված է Իսրայելի ներքաղաքական ճգնաժամերի կառավարման, Բ. Նեթանյահուի քաղաքական ապագայի և հասարակության համախմբման փորձերի հետ: ԱՄՆ-ում այն առնչվում է աղմկահարույց «Էփշտեյնի գործից» միջազգային հասարակությանը շեղելուն և ուժային արտաքին քաղաքականություն վարելու շուրջ կոնսենսուսի վերարտադրմանը: Իհարկե, սա որոշակիորեն ազդեցություն է թողնում նաև Իրանի վրա՝ հատկապես իշխանական խմբավորումների միջև հավասարակշռության տեսանկյունից:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ անկախ նրանից, թե ինչ աշխարհաքաղաքական համակարգ են փորձում պարտադրել գլոբալ ուժային կենտրոնները մյուսներին, առաջիկա տասնամյակում աշխարհը կանգնելու է անվերահսկելի ռիսկերով լի իրականության առաջ: Հակամարտող ուժերի կողմից ժամանակակից տեխնոլոգիաներով և արհեստական բանականությամբ կառավարվող զինատեսակների պատերազմական իրավիճակներում մասսայական փորձարկումն ու կիրառումը կարծես սպասվող համաշխարհային «Մեծ պատերազմի» նախերգանքն է:

[4] Ա. Սիմավորյան, Թուրք-իսրայելական հարաբերությունները տարածաշրջանային վերջին զարգացումների լույսի ներքո, ԱՌՎԱԿ – Հայկական վերլուծական կենտրոն, 14.04.2026, https://arvak.am/թուրք-իսրայելական-հարաբերություններ/